

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՒՆ

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության
հունիս ամսին կատարված աշխատանքների

Հունիսի 5-ի՝ Շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային օրվա, բնապահպանի օրվա կապակցությամբ <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների ուժերով ազգային պարկի տարածքում անց են կացվել աղբահանման աշխատանքներ: Բուսական և կենդանական աշխարհի պահպանության գործում բարձր պատասխանատվություն ցուցաբերելու և բարելավել աշխատանքի համար նույն օրվա կապակցությամբ շնորհակալագրով պարգևատրել են <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության տասն աշխատակիցներ:

Հունիս ամսին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 3 ծառ, որոնց համար կազմվել է 3 անտառխախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Իրականացվել են բնաշիվային եղանակով անտառի վերականգնման, աջակցման աշխատանքներ <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղում՝ 5 հա և <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղում ագրոտեխնիկական խնամք՝ 4 հա, հակահրդեհային նշանակության ջրավազանների վերանորոգում՝ 2 հատ:

<<Գոշ տեղամաս>> մասնաճյուղում հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում՝ 1,0 կմ և 1,0 կմ վերանորոգում, <<Աղավնավանք տեղամաս>> մասնաճյուղում՝ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում 0,5 կմ և 1,0 կմ վերանորոգում, <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղում հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում՝ 1 կմ:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել են ծորենի սովորական բուսատեսակի ուսումնասիրություն, << Կարմիր գրքում գրանցված Ռոստոմբեկովի Մոդեսի ուսումնասիրություն, վայրի պտղատուների և հիմնական ծառատեսակների ֆենոլոգիական ուսումնասիրություններ: Ստեղծվել են տաս նոր հերբարիումներ և տեղադրվել շրջանակներում: Իրականացվել են տարբեր բուսատեսակների հավաքման և չորացման աշխատանքներ

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակցի կողմից էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ է կատարվել Դիլիջան քաղաքում գործող <<Art Guesthouse>> զբոսաշրջային տուն: Ներկայացվել են <<Դիլիջան>> ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, տրամադրվել են տեղեկատվական նյութեր՝ գրքույկներ, բուկլետներ: Իրականացվել են Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհին հարակից տաղավարների տարածքների աղբահանության աշխատանքներ: Գերմանիայից այցելած զբոսաշրջիկների խմբի համար կազմակերպվել է ճանաչողական տուր՝ Աղավնավանքի եկեղեցի–Կենու պուրակ էկոերթուղով:

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար կնքվել են ամենազնաց ավտոմեքենաների ձեռք բերման, ջերմոցային կոնստրուկցիաների տեղափոխման և մոնտաժման աշխատանքների պայմանագրերը:
